



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

12 հոկտեմբեր 2012 թվականի N 27

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ
ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել հողամասերի օտարման սխեման (համաձայն հավելվածի) համաձայն որի թույլատրել համայնքի ղեկավարին 2012 թվականին աճուրդ-վաճառքի միջոցով օտարել համայնքի սեփականություն հանդիսացող 07-013-0136-0041 ծածկագրի՝ բնակավայրերի հասարակական կառուցապատման՝ 0.015հա հողատարածքը.

2. Օտարման ենթակա հողամասի համար մեկնարկային գին սահմանել.

1) Բնակավայրերի հասարակական կառուցապատման՝ 0.015հա-ի համար 279450/երկու հարյուր յոթանասունինը հազար չորս հարյուր հիսուն/ դրամ
Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
2. ԵՂԻՇՅԱՆ ԱՇՈՏ
3. ԽԱԶԱՏՐՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
5. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՎՐՈՒՅՐ
6. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

